ՍԱՄՎԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

7-ՐԴ ԴԱՐԻ ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԸ[1]

Հայկական լեռնաշխարհում ճարտարապետական-շինարարական գործը սկզբնավորվել է դեռևս չորս հազար տարի առաջ: Դրանից ի վեր այն անցել է զարգացման երկարատև մի ճանապարհ, որի անկյունադարձային անցուդիներում յուրացրել է, մշակել տեղական ճարտարապետական ավանդույթները, կրել, ավելի ուշ, քրիստոնեական մտածողության խորը կնիքը և մեզ մատուցվել իբրև հայկական ինքնատիպ ճարտարապետական արվեստ:

Զարգացման այսպիսի երկար ճանապարհ անցած հայկական ճարտարապետության մեջ բացառիկ տեղ է գրավում 7-րդ դարը, որ, աներկբա կերպով կարելի է ասել, նույն հարաբերության մեջ է գտնվում մեր ճարտարապետության ընդհանրապես, ինչ որ 5-րդ դարը՝ գիր ու գրականության, այսինքն՝ իրավամբ համարվելով հայ ճարտարապետության ոսկեդարը:

7-րդ դարում, ի շարս կառուցողական արվեստի բազմաթիվ հուշահամալիրների, աշխարհիկ շինությունների, վեր են խոյանում նաև մեծաթիվ եկեղեցիներ:

Հարկ է նշել, որ այս շրջանում եկեղեցաշինությունը կրել է ոչ թե տարերային կամ մասնակի բնույթ, այլ մղված է եղել կրոնական գործնական կարիքներից և հավասարապես զարկ է տրվել թե՛ հայոց կաթողիկոսների և թե՛ հայոց իշխանների կողմից:

Ուստի, հաշվի առնելով եկեղեցաշինության ընդհանրապես հայոց իշխանների ու կաթողիկոսների նման վերաբերմունքը, հեղինակային որոշակի պատկանելություն ունեցող եկեղեցիները դասակարգում ենք հետևյալ ենթախմբերի մեջ.

1. 7-րդ դ. կաթողիկոսաշեն եկեղեցիներ
2. 7-րդ դ. իշխանաշեն եկեղեցիներ

Նախապես նշենք, որ սույն գործի հիմնական նպատակը մեր հետաքրքրության շրջանակի մեջ մտնող եկեղեցիների մասին համառոտ և ծանոթագրական կարգի տեղեկություններ հաղորդելն է:

1. Կաթողիկոսաշեն եկեղեցիներ

Խնդրո առարկա ժամանակաշրջանում կառուցված եկեղեցիներից, թե՛ ժամանակագրական առումով և թե՛ հայկական ճարտարապետության մեջ գրված իր բացառիկ դիրքով, առաջին կաթողիկոսաշեն եկեղեցին Վաղարշապատի

---

[1] *Այս խորագրի ներքո մենք ընդգրկում ենք միայն եկեղեցաշեն կաթողիկոսներին և իշխաններին:*

Ս. Հռիփսիմե տաճարն է /618/: Եկեղեցու կառուցումը, ինչպես նշվում է տաճարի արձանագրության մեջ, իրականացվել է Կոմիտաս Ա Աղցեցի Կաթողիկոսի կողմից /615-628/ «Քրիստոս Աստուած յիշեա զԿոմիտաս հայոց կաթողիկոս շինաւղ սրբոյ Հռիփսիմէի»[2]: Սույն իրողությունը հաստատվում է նաև Սեբեոսի վկայությամբ. «Եւ եղև յամի ԻԸ-երրորդի թագաւորութեանն Ապրուէզ Խոսրովու ֆակեաց կաթուղիկոսն Կումիտաս գմատուռ սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի, զի կարի ցած և մթին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ հայրապետի հայոց կաթողիկոսի, որդւոյ սրբոյն Ներսիսի»[3]: Ապա պատմիչը, նշելով Հռիփսիմե կույսի նշխարների գյուտի մասին, ավելացնում է. «Շինեաց զեկեղեցին, և զերանելին եթող ի բացեայ վասն գիջութեան որմոցն, մինչև ցամաքեալ կրոյն: Ապա ամփոփեցաւ ի կայեանս իւր[4]»:

Սեբեոս պատմիչի վկայության համաձայն, Կոմիտաս կաթողիկոսը նորոգել է նաև Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որը մինչ այդ նորոգվել էր 5-րդ դարի վերջին քառորդում՝ Վահան Մամիկոնյան մարզպանի նախաձեռնությամբ[5]:

Ստորև ներկայացնում ենք Սեբեոսի վկայությունը. «Վերացոյց և զփայտայարկս սրբոյն կաթուղիկէին, նորոգեաց և զխախուտ որմոյն. շինեաց զքարայարկս»[6]:

Եկեղեցաշինության մեջ հաջորդ աչքի ընկնող ներկայացուցիչը **Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսն է /630-641/**, որի անվան հետ է կապված Վաղարշապատի մյուս եկեղեցու՝ Ս. Գայանեի կառուցումը /630-41/: Որքան էլ տարօրինակ է, այս հուշարձանի կառուցման մասին որևէ ակնարկ չկա Սեբեոսի երկում, որը այդ իրողության անմիջական ժամանակակիցն էր: Սակայն այս բացը լրացվում է շնորհիվ Դրասխանակերտցու հաղորդած տեղեկության. «Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայանեայ զոր, երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ՝ ֆակեալ զայն, ևս ընդարձակագոյն գնա շինեաց՝ կոփածոյ քարամբք և կրով ծուլելով. և արտաքուստ յարդարէր կայեանս բնակութեան քահանայական դասուց ի պաշտոն աստուածային խորանին»[7]:

Ինչպես տեսնում ենք սույն վկայության վերջին հատվածից, Եզրը կառուցել է նաև վանատուն, որի մասին նշվում է, թե «այս եղև սկիզբն ժամատուն շինելոյ. մինչև ցայս վայր ոչ երկիր ի հայս»[8]:

Դեռևս Եզր Ա Կաթողիկոսի գահակալման շրջանում արաբական ուժի ի հայտ գալով, միջազգային քաղաքական ասպարեզում տեղի են ունենում խոշոր քաղաքական տեղաշարժեր, որոնք իրենց անմիջական արձագանքն են գտնում նաև Հայաստանում: Արաբական ահագնացող այս սպառնալիքը մի կողմից և բյուզան-

---

2 *«Ակնարկ Հայ ճարտարապետության», Երևան, 1964, էջ 147:*

3 *«Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 121: Այսուհետև՝ Սեբեոս:*

4 *Անդ՝ էջ 121:*

5 *Մ. Հարությունյան, «Հայ ճարտարապետության պատմություն», Երևան, 1992, էջ 132: Այսուհետև՝ Հարությունյան:*

6 *Սեբեոս, նշվ. աշխ., էջ 121:*

7 *Հովհաննես Դրասխանակերտցի, «Պատմութիւն հայոց», Մոսկվա, 1853, էջ 46: Այսուհետև՝ Դրասխանակերտցի:*

8 *Անդ՝ էջ 203-ի 203-րդ տարրնթերցվածը:*

դական քաղաքականության ուղղությամբ դիրքորոշումը՝ մյուս, առավել սաստկանում են հատկապես Ներսես Տայեցի կամ Իշխանցի հայրապետի օրոք /641-661/: Սակայն, չնայած Հայաստանում տիրող նման խռովահույզ վիճակին, Ներսես կաթողիկոսը, հիրավի, անհախընթաց ծավալի շինարարական գործունեություն է ծավալում, որի թագն ու պսակը, աղբյուրներից[9] մեզ հայտնի սուրբ Գրիգոր կամ Զվարթնոց տաճարն է /642-652/: Այս «չքնաղ զալմանալեաւք» և «աստուածային պատոյն արժանի» եկեղեցու մասին սկզբնական տեղեկությունները պատկանում են Սեբեոսին. «Ցայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ ճանապարհին՝ յորում, ասեն, ընդ առաջ եղև թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երևեալ ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն...»[10]: Համաձայն Հովհաննես Դրասխանակերտցու, ինչպես նաև նույն Սեբեոսի[11], Ներսես Շինողը Զվարթնոցի տաճարի մոտ կառուցել է նաև կաթողիկոսական ապարանք. «... հայրապետն Ներսէս... զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յորինեալ ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք»[12]:

Զվարթնոցի եկեղեցին, դժբախտաբար, չի պահպանվել և հիմնովին ավերվել է՝ 10-րդ դարի վերջին քառորդում տեղի ունեցած երկրաշարժից:

Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի հոանդուն շինարարական գործունեության արդյունքի են նաև Դվինի Ս. Սարգիս և Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները, որոնք, ինչպես վկայում է Սամվել Անեցին, Զվարթնոցի տաճարից ավելի վաղ են կառուցվել. «Հայրապետն Ներսէս շինէ զսուրբ Գրիգոր զզարմացուցիչն տեսողաց, բայց յառաջ շինէ զվկայարան սրբոյն Սարգսի ի Դուին, և զոր ի վերայ Վիրապին սրբոյն Գրիգորի»[13]: Բացի Սամվել Անեցուց, Դվինի Սուրբ Սարգիս Եկեղեցու մասին տեղեկություն է պարունակում նաև Վարդան Բարձրաբերդցու երկը: Պատմիչը, խոսելով Ներսես Շինողի շինարարական գործունեության մասին, ավելացնում է, որ եզրի մահից հետո Ներսեսը «քաղէր և ի նմին տեղւոջ շինէր զերդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի»[14]: Խոր Վիրապի Գրիգոր Լուսավորիչ տաճարի՝ Ներսեսի կողմից կառուցված լինելը նշված է Դրասխանակերտցու պատմության մեջ, ուր պատմիչը խոսելով Ներսեսի կառուցումների մասին՝ հավաստում է. «Զկնի ապա շինէ տաճար սրբութեան և ի

---

9 *Դրասխանակերտցի, էջ 48, Սեբեոս, էջ 147, Ղևոնդ, «Պատմութիւն», Ս. Պետերբուրգ, 1887 թ., էջ 14:*

10 *Սեբեոս, էջ 147:*

11 *Անդ՝ էջ 147:*

12 *Դրասխանակերտցի, էջ 48:*

13 *Ա. Մանուչարյան, «Քննութիւն Հայաստանի IV-XI դդ. շինարարական վկայագրերի», Երևան, 1977, էջ 96: Այսուհետև՝ Մանուչարյան:*

14 *Անդ՝ էջ 95:*

վերայ Վիրապին սրբոյն Գրիգորի, ուր ի մէջ բունաւորացն թաղեալ՝ առաքելանուէր այրն Աստուծոյ զկամակոր վիշապին ջախջախեաց զգլուխ...»[15]:

Բացի վերոհիշյալ եկեղեցիներից, Ներսես Շինողին են վերագրվում նաև Վաղարշակերտի, իր հայրենի Իշխան գյուղի և Բանակի[16] եկեղեցիները:

Ներսես Գ–ից հետո իր նախորդ կաթողիկոսների շինարարական ավանդույթն է շարունակում Անաստաս Ա Ակռոեցի կաթողիկոսը /662–67/: Նա իր հայրենի գյուղում՝ Ակռոիում, կառուցում է մի եկեղեցի, որը սակայն չի պահպանվել՝ 1840 թ. կործանիչ երկրաշարժից փլատակվելու հետևանքով: Այս տաճարի կառուցման մասին տեղեկություն է հաղորդում Դրասխանակերտցին. «...մեծ կաթողիկոսն Անաստաս շինէ զպայծառապանոյն եկեղեցին ի հայրենի բնակութեանն իւրում ի վանս դաստակերտին Ակռոյ՝ կացորդ զնա յարդարեալ քահանայական ուխտի միակրոնից և այլոց ևս կղերց եկեղեցւոյ ի պաշտօն աստուածային խորանին և ի տածողութիւն հանգստեան հիւրոց և տնանկաց և աղքատաց»[17]: Ինչպես երևում է վկայությունից, Անաստաս կաթողիկոսը Եզր կաթողիկոսի օրինակով, «կացորդ», այսինքն՝ ժամատուն է կառուցել եկեղեցուն կից:

2 Իշխանաշեն եկեղեցիներ

Ինչպես վերը նշել էինք, եկեղեցաշինության բնագավառում գործուն նախաձեռնություն էին հանդես բերում նաև հայոց իշխանները, որոնք ժամանակաշրջանի խառնաշփոթ ու դժվարին պայմաններում, ըստ կարելվույն, նպաստեցին 7-րդ դարի ճարտարապետական հուշարձանների ստեղծմանը:

Իշխանաշեն եկեղեցիներից ժամանակագրականորեն առաջինը Բագարանի Ս. Թեոդորոս տաճարն է, որի կառուցման մասին տեղեկություն է հաղորդում տաճարի վրա փորագրված վիմագիր արձանագրությունը: Այս արձանագրությունից հայտնի է դառնում, որ տաճարը 624 թվականին հիմնադրել է իշխան Բուտ Առվեղյանը, իսկ ապա՝ վերջինիս մահվանից հետո, շինությունը ավարտին է հասցվել Բուտի կնոջ՝ Աննայի կողմից՝ 631 թվականին. «Երեսուն եւ չորրորդ ամի Խոսրովայ արքայի, հրաճելի տէր Բուտ Առվեղեան ձգեաց հիմունս սուրբ եկեղեցւոյս եւ երեսուն եւ ութ ամոյն Գոբրի եւ Խումաթ կորուսին զԲուտն և յետ երից ամաց մահուան Բտին կատարեաց սուրբ եկեղեցիս Աննայ Բտին ամուսին տրէ ամսեան ի քսան և հինգերորդ աւր կաթողիկոսութեան Եզրայ եւ ի մտրգպանութեան Վարազ Տիրոցն Հայոց ասպետի, ի տերութեան Վահանայ Առուեղեան ի հոգաբարձութեան Թեոփիլոսի եղբայրկան որդւոյ Եւսերկայ Կամսարականի, Աշանուշայ եւ Աննայ դստերք Գրիգորի Վանանդացւոյ եւ որդեակք Գիւտ, Ուահան և Տիարուանդ, դժխոյ Սահակի Ռահասի Շուշան: Ցիշեցի ԱԾ և ողորմեցի»[18]:

---

15 *Դրասխանակերտցի, էջ 48:*

16 *Տ. Մարության, «Խորագույն Հայք», Երևան 1978, էջ 11 և 102:*

17 *Դրասխանակերտցի, էջ 52:*

18 *Մանուչարյան, էջ 62–63:*

Հարկ է նշել, որ Բուտ Առավեղյանի անունը միայն այստեղ է հանդիպում. իսկ Առավեղյանների մասին կան միայն շատ կցկտուր տեղեկություններ: Հայտնի է, որ Առավեղյանների նախարարական տոհմը բնակվել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգում, ունեցել 500 հոգիանոց հեծելազուրդ[19]:

Իշխանաշեն եկեղեցիներից հաջորդը Թալինի Ս. Աստվածածին տաճարն է, որը կառուցվել է Ներսես Կամսարական իշխանի կողմից: Սույն իրողությունը փաստվում է տաճարի արևմտյան ճակատին փորագրված արձանագրությամբ.

«Ես Ներսեհ ապոհիւպատ պատրիկ Շիրակայ և Արշարունեաց շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Ածածնին ի բարեխաւսութիւն ինձ և Շուշանայ ամուսնոյ իմոյ և հրահատայ որդւոյ մերոյ[20]»:

Պատմական այս անձնավորությունը՝ Ներսեհ Կամսարականը, ապրել է 7-րդ դարի առաջին կեսին[21], ավելի որոշակի՝ 629-654 թվականներին, եղել է Կամսարականների նախարարական տոհմի տանուտերը[22]:

Իշխանաշեն եկեղեցիների շարքին է դասվում նաև Մրենի տաճարը, որի շինարարությունը կատարվել է 638-640թթ[23]: Այս շինությունը, ըստ Դրասխանակերտցու, կառուցվել է Դավիթ Սահառունի կյուրոպաղատի կողմից /635-639/[24]. «Կայսրն Հերակլ զԴաւիթ Սահառունի կիւրապաղատ արարեալ՝ իշխան Հայոց կացուցանէր... և ի հրամանէ նորուն շինէր իսկ զեկեղեցին գեղեցկաշարմար, որ ի քաղաքագեղն Մրեն...»[25]:

Խնդրո առարկա ենթախմբում ուշագրավ հուշարձան է Ալամանի Ս. Անանիա եկեղեցին: 637 թ. կառուցված այս տաճարը գտնվում է Արևմտյան Շիրակում և ունի կառուցողի ինքնությունը բացահայտող արժեքավոր արձանագրություն. «Քսան և եօթնեմիոյ Հերակլի բարեպաշտ թագաւորի Ներսեհ Շիրակայ և Արշարունեաց տեառն և Թեոփիղոս Արշարունեաց եպիսկոպոս. Ես Գրիգոր եղուստր և Մարիամ իմ կին շինեցաք զսուրբ եկեղեցին վասն մեր հոգւոց»[26]: Թեև տաճարի կառուցողի՝ Գրիգոր եղուստրի մասին ուրիշ տեղեկություն չկա այլ տեղ, սակայն այն, որ նա իշխանական տոհմից է, երևում է եղուստր[27] տիտղոսից:

7-րդ դարի իրականության մեջ բացառիկ է Գրիգոր Մամիկոնյանի կառավարման շրջանը/661-685/, որը եղավ տնտեսական և մշակութային

---

19 *Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 1-ին, Երևան, 1974, էջ 532, տե՛ս նաև Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ-Ս. Ղազար, 1890թ., էջ 429:*

20 *Վ. Հարությունյան, էջ 157:*

21 *Վ. Հարությունյան, էջ 157, տե՛ս նաև Գ. Հովսեփյան, «Քարտէզ հայ հնագրութեան», Շողակաթ, Վաղարշապատ 1913, էջ 173:*

22 *Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 5-րդ, Երևան, 1979, էջ 215:*

23 *Շողակաթ, նշվ. աշխ., էջ 173:*

24 *Ա. Տեր-Ղևոնդյան, «Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը 7-րդ դարում», Բանբեր Երևանի Համալսարանի, 1969, համ. 1-ին, էջ 243:*

25 *Դրասխանակերտցի, էջ 46:*

26 *Վ. Հարությունյան, էջ 158:*

27 *Հր. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», երկրորդ հատոր, Երևան, 1973, էջ 23:*

ձեռքբերումների փայլուն մի ժամանակահատված[28]: Շարունակելով իր նախորդների ավանդությունը՝ իշխան Գրիգոր Մամիկոնյանը եկեղեցաշինությանը նոր թափ հաղորդեց: Նրա անմիջական նախաձեռնությամբ կառուցվեցին Արուճի Ս. Գրիգոր և Եղվարդի Ս. Զորավար եկեղեցիները:

Արուճի Ս. Գրիգոր տաճարի շինությունը, համաձայն Գանձակեցու վկայության, ավարտվել է 666 թվականին. «Ի հինգերորդ ամի Անաստասայ եղև շինուած կաթուղիկէն, որ յաւանն Արուճ»[29]:

Արուճի տաճարի վերաբերյալ հիշարժան տեղեկություն է հաղորդում նաև Դրասխանակերտցին, որի հիշատակությունը առավել արժեքավոր է շնորհիվ այն վկայության, ըստ որի՝ Գրիգոր Մամիկոնյանը տաճարի հարավային կողմում կառուցել է նաև պալատ: Դրասխանակերտցու հիշատակությունը հետևյալն է. «Զայսու ժամանակաւ բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրիալ չքնաղագեղ եկեղեցին, որ ի մեծ դաստակերտին Արուճ՝ շինէ գնա ստիպով, երկնային իմն նեմարան յարդարեալ ի վերայ երկրի: Եւ ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր յեզր քարաժայռ ծործկին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարաձերպս վիմարդ քարանցն, որ գեզերս ունի իբրև զպսակ պատուարի: Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ»[30]:

Իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառուցած մյուս եկեղեցին՝ Եղվարդի Ս. Զորավարը, որը կառուցվել է 7-րդ դարի երկրորդ կեսին[31], այժմ գտնվում է կիսաքանդ վիճակում: Այս տաճարի մասին արժանահավատ հիշատակություն է թողել Դրասխանակերտցին, որը, խոսելով Արուճի տաճարի հիմնադրման մասին, վկայում է, որ Գրիգոր Մամիկոնյանը «շինէ նաև նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյն ի նմա յարդարեալ ըստ յարևելից կուսէ դաստակերտին մեծի Եղիվարդայ՝ տուն բնակութեան կուսակրօնից գնա հաստատէ ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»[32]: Ինչպես հեշտ է նկատել, Գրիգոր Մամիկոնյանը այստեղ հիմնել է ոչ միայն եկեղեցի, այլև բնակավայր, ուր պետք է բնակվեին աշխարհիկ կյանքից հրաժարվածներ:

Հայոց իշխանապետական գահին Գրիգոր Մամիկոնյանին հաջորդում է պատրիկ Աշոտ Բագրատունին /685-689/, որը նույնպես անմասն չի մնացել եկեղեցաշինության մեջ իր ավանդը ներդնելու պատվից: Վերջինիս նախաձեռնությամբ է կառուցվել Դարույնքի Ամենափրկիչ եկեղեցին, որն ամենայն հավանականությամբ, կառուցվել է Աշոտ պատրիկի իշխանապետության շրջանում /685-689/: Դարույնքի տաճարի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 7-րդ դարի պատմիչ Ղևոնդը, ըստ որի՝ եկեղեցու կառուցումից հետո Աշոտ իշխանապետը այնտեղ տեղադրել է արևմուտքից բերված Քրիստոսի մարդեղության գեղանկար պատկերը: Դարույնքի տաճարի մասին հիշատակելիս՝ պատմիչը նախ անդրադառնում է Աշոտ պատրիկի անձնական արժանիքներին,

---

28 *Տեր-Ղևոնդյան, էջ 244:*

29 *Կ. Մաթևոսյան, «Արուճ», Երևան., 1987, էջ 14:*

30 *Դրասխանակերտցի, էջ 52:*

31 *Վ.Հարությունյան, էջ 81:*

32 *Դրասխանակերտցի, էջ 52:*

ապա՝ ավելացնում. «Եւ շինէր զեկեղեցին Դարիւնից յիւրում ոստանին, և զկենդանագրեալ զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտիցն արևու մեծասքանչ զօրութեամբ՝ եանգուցանէր ի նմա և նորա անուամբ զեկեղեցին անուանեաց»[33]:

Ուշագրավ է, որ այս եկեղեցու նավակատիքի առթիվ է զրվել և առաջին անգամ երգվել «Զորս ըստ պատկերի քում...» Նավակատյաց Սուրբ Խաչի հինգերորդ օրվա կանոնի Ողորմյա շարականը /գԺ/[34]:

Իշխանաշեն կառույցների շարքին է դասվում նաև Թալինի մեծ կաթուղիկեն, որի կառուցողի և կառուցման ժամանակի վերաբերյալ թեև մատենագրական հիշատակություններ և վիմագիր վկայագրեր չկան, բայց, այնուամենայնիվ, ենթադրվում է, որ 7-րդ դարում Կամսարականների իշխանական տան ծավալած շինարարական գործունեության արդյունք է[35]:

Հարկ է նշել, որ, բացի հիշված եկեղեցիներից, 7-րդ դարից պահպանվել են նաև մի շարք կանգուն կամ խոնարհված նարտարապետական կառույցներ, որոնց մասին չենք կարող խոսել վիմագիր և մատենագրական աղբյուրների բացակայության պատճառով: Այդպիսի շինություններ են Արթիկի Լմբատավանքը և կաթուղիկեն, Աշտարակի Կարմրավորը, Թալինի Գառնահովիտ և Իրինդ գյուղերի եկեղեցիները, Օշականի Ս. Սիոն /Մանկանց/ տաճարը և այլն:

Համեստ և ոչ այնքան ընդգրկուն հայացքով՝ այս է 7-րդ դարի եկեղեցաշինարար կաթողիկոսների և իշխանների ծավալած գործունեության պատկերը, որը պերնախոս վկայությունն է այն բանի, որ 7-րդ դարում պարսկա-բյուզանդական և արաբական ասպատակությունները դեռևս չէին մարել հայկական շինարար ոգու կրակը, և որ քաղաքական վայրիվերումների պայմաններում իսկ մշակութային, նարտարապետական կյանքի զարկերակը տրոփում էր:

---

33 *Ղևոնդ Վարդապետ, «Պատմություն», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 16:*

34 *«Շարական», Վաղարշապատ, 1888, էջ 379-80:*

35 *Վ. Հարությունյան, էջ 52:*